

Վարկ «Հայաստանի էլեկտրական ցանցերին» Կայունության Ծրագրի շրջանակներում

Երկիր	ՀԱՅԱՍՏԱՆ
Ծրագրի համարը	52026
Բիզնես ոլորտ	Էներգետիկա Եվրասիայում
Պետական/մասնավոր	ՄԱՍՆԱՎՈՐ
Բնապահպանական կատեգորիա	B
Հաստատման նախատեսված ամսաթիվը՝	2020թ. ապրիլի 21-ը
Կարգավիճակը՝	Հաստատված է
Ծրագրի ամփոփ փաստաթղթի անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվը՝	

Ծրագրի նկարագրություն

Ծրագիրը հաստատվել է որպես COVID-19 համաճարակին Բանկի արձագանքի մի մաս։ Այս ծրագրի իրականացման ուղացումներից խուսափելու համար Բանկի նախագահը շեղում է կատարել Ծրագրի ամփոփ փաստաթղթի հրապարակման սովորական ժամկետներից, որոնք նախատեսված են Տեղեկությունների հասանելիության մասին Հրահանգի V Բաժնում։ COVID-19-ին Բանկի արձագանքի և տվյալ շեղման վերաբերյալ մանրամասները կարող եք գտնել մեր կայքում։

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» («ՀԷՑ») ՓԲԸ-ին 25 միլիոն ԱՄՆ դոլարի չափով առաջնային վարկ («Վարկ»), որը տրամադրվում է Ասիական զարգացման բանկի («ԱԶԲ»)՝ 20 միլիոն ԱՄՆ դոլարի չափով առաջնային վարկին զուգահեռ։

Ծրագրի նպատակները

Վարկը կօգնի «ՀԷՑ»-ին բավարարել շրջանառու կապիտալի իր կարիքները COVID-19 համաճարակի պատճառով առաջացած՝ իրացվելիության դեֆիցիտի պայմաններում:

Ազդեցությունն անցումային շրջանի վրա

Ակնկալվող անցումային ազդեցության (ETI) ցուցանիշը՝ 75:

Անցումային ազդեցությունն ունի երկու բաղադրիչ. (i) նոր վերարտադրող վարքագծի և գործունեության ցուցադրում (GET նախագիծ), և (ii) հաստատություններ, օրենքներ և քաղաքականություններ, որոնք խթանում են շուկայի գործունեությունն ու արդյունավետությունը: Բանկը մոբիլիզացրել է Տեխնիկական Աջակցություն՝ օժանդակելու «Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին» («ՀԾԿՀ») բաշխման սակագնի մեթոդաբանության բացերի վերլուծության իրականացման գործում: Ուսումնասիրությունն արդեն ավարտված է: Գոյություն ունեցող ծրագրի (OpID 48957) պորտֆելի անցումային ազդեցության ցուցանիշն աճել է նախկինում գրանցված 60-ից և դարձել 75:

Հաճախորդը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ

ՎԶԵԲ-ի կողմից տրամադրվող ֆինանսավորում

25,000,000.00 ԱՄՆ դոլար

Ծրագրի ընդհանուր գումարը

45,000,000.00 ԱՄՆ դոլար

Բնապահպանական և սոցիալական ազդեցության ամփոփ նկարագիր

Դասվել է B կատեգորիայի (Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն 2019) որպես միջինից բարձր ռիսկային, ինչը պայմանավորված է էներգիայի բաշխման ոլորտով և Բնապահպանական և սոցիալական գործողությունների պլանի (ԲՄԳՊ) պատմականորեն դանդաղ իրականացումով: Այս ծրագրի ԲՄ փորձաքննությունը իրականացվել է COVID-19-ին մոտեցմանը համահունչ և հիմնված է ներքին ԲՄ փորձաքննության և անցյալի ԲՄ փորձաքննությունների մասին անկախ զեկույցների և մոնիտորինգի հաշվետվությունների քննության վրա: Բանկը տեղյակ է Ընկերության՝ իր գործառնությունները ՎԶԵԲ-ի Գործունեության պահանջներին (ԳՊ) համապատասխան իրականացնելու կարողությունների մասին: Բանկը երկար տարիներ համագործակցել է Ընկերության հետ, Բնապահպանական և սոցիալական գործողությունների կորպորատիվ պլանը (ԲՄԳՊ) առաջին անգամ համաձայնեցվել է 2008թ.-ին և վերանայվել 2018թ.-

ին: 2017թ.-ին երրորդ կողմը իրականացրել է վերջին ԲՄ փորձաքննությունը, և Բանկը պարբերաբար՝ 6 ամիսը մեկ, ստանում է հաշվետվություններ Վարկատուների տեխնիկական խորհրդատուից (վերջին հաշվետվությունը թվագրված է 2019թ.-ի հոկտեմբերով):

2017թ.-ի ԲՄ փորձաքննությունը հաստատել է, որ Ընկերությունն ունի հատուկ ստեղծված՝ Բնապահպանական, Առողջության և անվտանգության, Մարդկային ռեսուրսների և Հանրային կապերի հաստիքներ, որոնք ստեղծվել են Ընկերությունում ՎՁԵԲ-ի նախորդ ներդրումից հետո (2008թ.-ին), և Ընկերությունն ակտիվորեն իրականացնում է համակարգային մոտեցում բնապահպանական և սոցիալական հարցերի կառավարման հանդեպ՝ կիրառելով համակարգեր, որոնք համապատասխանում են ISO 9001, ISOA 14001 և OHSAS 18001 (այժմ ISO 45001)-ին՝ նպատակ ունենալով ապագայում հավաստագրում ստանալ:

Ներկայիս ԲՄԱԳ-ը (2018թ.) կենտրոնանում է Ընկերության կարողությունների ամրապնդման և բնապահպանական ու սոցիալական ռիսկերի կառավարման հանդեպ համակարգված մոտեցման կիրառման վրա, ներքին ընթացակարգերի ձևակերպման վրա՝ ստուգելու և գնահատելու ծրագրերի համապատասխանությունը ՇՄԱԳ օրենսդրությանը, ինչպես նաև վտանգավոր նյութերի և վտանգավոր թափոնների կառավարման բարելավման, կապալառուների համար ԲՄ պահանջների խստացման և ներքին կադրային ընթացակարգերի ամրապնդման վրա, այդ թվում՝ բողոքարկման մեխանիզմի ձևակերպման, Առողջության և անվտանգության (ԱԱ), Անհատական պաշտպանիչ սարքավորումների օգտագործման և հանրային անվտանգության վրա: ՀԷՑ-ը ՎՁԵԲ-ի և ԱԶԲ-ի հետ համաձայնեցրել է Միասնական կառավարման համակարգի մշակման և ներդրման վերաբերյալ մանրամասն Պլան:

Մոնիտորինգի զեկույցները հաստատում են, որ Ընկերությունը շարունակել է օգտվել երրորդ կողմի՝ կառավարման համակարգի հարցերով խորհրդատուի ծառայություններից՝ համապատասխան ընթացակարգերի մշակման, Գլխամասային գրասենյակում և մարզային մասնաճյուղերում պարտականությունների բաշխման գործում ՀԷՑ-ին աջակցելու նպատակով: Մշակվել են մի շարք ընթացակարգեր, այդ թվում՝ կապալառուի կառավարման, ՇՄԱԳ օրենսդրությանը ծրագրերի համապատասխանության ստուգման, թափոնների կառավարման և այլ ընթացակարգեր, որոնք պետք է իրականացվեն և ստուգվեն անձնակազմի վերապատրաստման և ներքին աուդիտի միջոցով: ՀԷՑ-ը առաջընթաց է գրանցել նաև վտանգավոր թափոնների պահեստային տարածքների մշակման և բարելավման գործում, միջազգային լավագույն փորձին համապատասխան: ԲՄԱԳ-ի որոշ այլ գործողություններ, ի թիվս այլոց՝ տրանսֆորմատորային յուղում պոլիքլորացված բիֆենիլների (PCB) առկայության թեստերի հետ կապված գործողությունները, դեռ կատարված չեն:

ՀԷՑ-ի մասնագիտական առողջության և անվտանգության (OHS) կառավարման համակարգն ամրապնդելուն օժանդակելու նպատակով Բանկը Մասնագիտական անվտանգության և առողջության կազմակերպության՝ Անվտանգության կառավարման դասընթացներ է կազմակերպում ՀԷՑ-ի առողջության/անվտանգության և տեխնիկական հարցերով տնօրենների համար:

ԲՄ փորձաքննությունը հաստատել է, որ գոյություն ունեցող ԲՄԱԳ-ն համարժեք է, կայուն, և թարմացման կարիք չունի: Բանկը կշարունակի ՀԷՑ-ի ԲՄ կատարողականի և ԲՄԱԳ-ի իրականացման մոնիտորինգը Վարկատուի տեխնիկական խորհրդատուի և Բնապահպանական կայունության բաժնի տեղայցերի միջոցով, կաջակցի ընկերությանը լրացուցիչ նպատակային ԱԱ դասընթացների միջոցով (երբ ճանապարհորդության սահմանափակումները և առողջապահական մտահոգությունները վերանան):

Տեխնիկական աջակցություն

Կայունության Ծրագրի շրջանակում այս նախագծի համար լրացուցիչ ՏԱ չի ենթադրվում:

Հավելյալություն

Հայաստանում COVID-19-ի տարածման պատճառով, երբ 2020թ. մարտի 17-ին արտակարգ դրություն էր հայտարարվել, որին հաջորդել էին արգելափակումները ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ ձեռնարկությունների համար, տնտեսությունը կաթվածահար էր եղել և տեղական բանկերը սկսեցին բախվել իրացվելիության խիստ պակասի՝ բնակչության և ՓՄՁ-ների կողմից վճարումների ուշացման պատճառով: Նման պայմաններում ՀԷՑ-ի իրացվելիության պահանջը չի կարող բավարարվել տեղական առևտրային բանկերի կողմից, որոնք նույնպես տուժել են COVID-19 ճգնաժամից: ՎԶԵԲ-ի արագ արձագանքը չափազանց կարևոր է և կապահովի ոչ միայն ուղղակի ֆինանսական աջակցություն երկրի խոշորագույն ընկերությանը, այլև կաջակցի երկրի տնտեսությանը այս համաճարակային ճգնաժամի պայմաններում:

Ընկերության կոնտակտային տվյալները

Արմեն Արշակյան

arshakyan_AS@ena.am

+37477774000

www.ena.am

Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան 0047, Արմենակյան փողոց, շենք 127:

Ծրագրի ամփոփ փաստաթղթի վերջին թարմացման ամսաթիվը՝

2020թ.-ի հուլիսի 23-ը:

Անցումային շրջանի ընկալումը

[Այստեղ](#) կարող եք լրացուցիչ տեղեկություններ գտնել առ այն, թե ինչ մոտեցումներ է կիրառում ՎԶԵԲ-ը անցումային շրջանում առաջընթացի վրա ազդեցությունը չափելու համար:

Բիզնես հնարավորություններ

Բիզնես հնարավորությունների կամ գնումների համար դիմե՛ք հաճախորդի ընկերությանը:

ՎԶԵԲ-ի հետ կապված (գնումներին չառնչվող) բիզնես հնարավորությունների համար դիմե՛ք.

Հեռ.՝ +44 20 7338 7168

Էլ-փոստ՝ projectenquiries@ebrd.com

Պետական ոլորտում ծրագրերի համար այցելե՛ք [ՎԶԵԲ-ի գնումներ](#):

Հեռ.՝ +44 20 7338 6794

Էլ-փոստ՝ procurement@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

Կարող եք անել կոնկրետ հարցումներ՝ օգտագործելով [ՎՁԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Բնապահպանական և սոցիալական քաղաքականություն (ԲՄՔ)

[ԲՄՔ](#)-ն և դրա հետ կապված՝ Գործունեության նկատմամբ պահանջները (ԳՊ-ներ) սահմանում է այն ուղիները, որոնց միջոցով ՎՁԵԲ-ն իրականացնում է իր հանձնառությունը՝ խթանելու «Էկոլոգիապես առողջ և կայուն զարգացում»: ԲՄՔ-ն և ԳՊ-ները ընդգրկում են հատուկ դրույթներ, ըստ որոնց հաճախորդները պետք է համապատասխանեն հրապարակայնացման և խորհրդատվության մասին ազգային օրենքների կիրառվող պահանջներին, ինչպես նաև ստեղծեն բողոքարկման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և լուծումները դիտարկելու նպատակով, մասնավորապես, հաճախորդի և ծրագրի կողմից բնապահպանական և սոցիալական ասպեկտների կատարողականի վերաբերյալ: Կախված ծրագրի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բնույթից և մասշտաբից, ՎՁԵԲ-ը լրացուցիչ պահանջում է, որ իր հաճախորդները, անհրաժեշտության դեպքում, տեղեկություն հրապարակեն ծրագրից բխող ռիսկերի և ազդեցությունների մասին կամ բովանդակալից խորհրդակցություններ անցկացնեն շահագրգիռ կողմերի հետ, դիտարկեն նրանց կարծիքներն ու արձագանքն դրանց:

Այս կապակցությամբ ՎՁԵԲ-ի գործելակերպի վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկությունները ներկայացված են [ԲՄՔ](#)-ում:

Բարեվարքություն և համապատասխանություն

ՎՁԵԲ-ի՝ Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենի գրասենյակը (ՀՎԳՏԳ) խթանում է լավ կառավարումը և ապահովում բարեվարքության բարձրագույն չափանիշների կիրառումը Բանկի գործունեության բոլոր ասպեկտներում՝ միջազգային լավագույն փորձի համաձայն: Բանկի բոլոր հաճախորդների վերաբերյալ իրականացվում է բարեվարքության պահանջներին համապատասխանության ստուգում-ուսումնասիրություն՝ համոզվելու, որ ծրագրերը չեն պարունակում Բանկի համար անընդունելի ռիսկեր բարեվարքության կամ հեղինակության առումով: Բանկի համոզմամբ, ծրագրի գնահատման և հաստատման փուլերում խնդիրների հայտնաբերումն ու լուծումը Բանկի գործարքների բարեվարքության ապահովման ամենաարդյունավետ միջոցներն են: ՀՎԳՏԳ-ն առանցքային դեր է կատարում պաշտպանիչ այս գործողություններում, ինչպես նաև օգնում է վերահսկել բարեվարքությանն առնչվող ռիսկերը ծրագրերի հետներդրումային փուլերում:

ՀՎԳՏԳ-ն նաև պատասխանատու է ՎՁԵԲ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում խարդախության, կոռուպցիայի և չարաշահման կապակցությամբ մեղադրանքների հետաքննության համար: Ցանկացած անձ, ինչպես Բանկի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, ով կասկածներ ունի, որ առկա են խարդախության կամ կոռուպցիայի դեպքեր, պետք է գրավոր զեկույց ներկայացնի

Համապատասխանության վերահսկման գլխավոր տնօրենին էլ-

փոստով՝ compliance@ebrd.com: Խնդիրների մասին բոլոր զեկույցները կքննվեն

ՀՎԳՏԳ-ի կողմից՝ հետագա քայլերը որոշելու նպատակով: Քննվելու են բոլոր զեկույցները, այդ թվում՝ անանուն զեկույցները: Զեկույցները կարող եք ներկայացնել Բանկի կամ Բանկի գործունեության ցանկացած երկրի լեզվով: Տեղեկությունը տրամադրելիս անհրաժեշտ է դրսևորել բարեխիղճ մոտեցում:

Տեղեկությունների հասանելիության քաղաքականություն (ՏՀՔ)

ՏՀՔ-ն սահմանում է, թե ինչպես է ՎԶԵԲ-ը հրապարակայնացնում տեղեկությունները և խորհրդակցում շահագրգիռ կողմերի հետ, որպեսզի նպաստի ՏՀՔ-ի ռազմավարությունների, քաղաքականությունների և գործառնությունների մասին ավելի լավ իրազեկմանն ու ընկալմանը 2020թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնելուց հետո: Խնդրում ենք այցելել [Տեղեկությունների հասանելիության քաղաքականության](#) կայքէջը՝ պարզելու, թե ինչ տեղեկություններ են առկա ՎԶԵԲ-ի կայքում:

Տեղեկություններ ստանալու համար կարող եք կոնկրետ հարցումներ ներկայացնել՝ օգտագործելով [ՎԶԵԲ-ի հարցումների ձևաթուղթը](#):

Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմ (ԾՀԱՄ)

Եթե Հաճախորդի կամ Բանկի հետ բնապահպանական և սոցիալական ասպեկտների կամ հրապարակայնացման հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված ջանքերն (օրինակ, Հաճախորդի՝ Ծրագրի մակարդակով բողոքարկման մեխանիզմի կամ Բանկի ղեկավարության հետ անմիջական ներգրավման միջոցով) ապարդյուն են, ապա անհատներն և կազմակերպությունները կարող են դիմել ՎԶԵԲ-ի՝ Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմին (ԾՀԱՄ)՝ իրենց մտահոգող խնդիրների լուծումը ստանալու համար:

ԾՀԱՄ-ն անկախ եղանակով քննում է Ծրագրի հետ կապված խնդիրները, որոնք, ենթադրաբար, վնաս են պատճառել (կամ, հավանաբար, կարող են վնաս պատճառել): Մեխանիզմի նպատակն է. աջակցել Ծրագրի շահագրգիռ կողմերի միջև երկխոսությանը՝ շրջակա միջավայրի, սոցիալական ասպեկտների և հրապարակայնացման հետ կապված խնդիրները լուծելու նպատակով, պարզել, արդյոք Բանկը համապատասխանել է իր իսկ [Բնապահպանակա և սոցիալական քաղաքականությանը](#) կամ իր՝ [Տեղեկությունների հասանելիության քաղաքականությանը](#)՝ Ծրագրին վերաբերող կոնկրետ դրույթներին, և, անհրաժեշտության դեպքում, վերացնել այդ քաղաքականություններին վերաբերող ցանկացած անհամապատասխանություն՝ միաժամանակ կանխելով Բանկի անհամապատասխանության դեպքերն ապագայում:

Խնդրում ենք այցելել Ծրագրերի հաշվետվողականության անկախ մեխանիզմի կայքէջը՝ տեղեկանալու, թե ինչպես կարելի է Դիմում ներկայացնել՝ լրացնելով [առցանց գաղտնի ձևաթուղթը](#), [էլ-փոստով](#), [փոստով կամ հեռախոսով](#): ԾՀԱՄ-ը պատրաստ է քննարկել ձեր մտահոգությունները և պատասխանել ցանկացած հարցերի, որոնք դուք կարող եք ունենալ Դիմումի ներկայացման կամ վարման վերաբերյալ, և այս գործընթացներն իրականացնելիս ԾՀԱՄ-ը հետևում է [Ծրագրերի հաշվետվողականության քաղաքականությանը](#) և [Ուղեցույցին](#): Ըստ պահանջի, Դիմումատուների ինքնությունը կարող է գաղտնի պահվել: